

# Ինչու են Կարևոր Սահմանված Պատվաստումները

## 1. Արդյո՞ք իմ երեխան պետք է ստանա իր սահմանված պատվաստումները, քանի դեռ Լոս Անջելեսում կան COVID-19-ով վարակման դեպքեր




- Այո, պատվաստումները և երեխաների առողջական վիճակին հետևելու այցելությունները (well-child visits) կարևոր են բոլոր երեխաների համար և Էական նշանակություն ունեն երկու տարեկանից փոքր երեխաների համար: Պատվաստումներն օգնում են ձեր երեխային լինել ապահով և առողջ: Նրանք պաշտպանում են երեխաներին լուրջ և վտանգավոր հիվանդություններից, ինչպիսիք են՝ կարմրուկը, խոզուկը և կապույտ հազը:
- Եթե ձեր երեխան բաց է թողել որոշ պատվաստումներ, այժմ պատվաստվելու ճիշտ ժամանակն է:
- Տարիքին համապատասխան պատվաստումների ցանկի համար այցելեք՝ [www.cdc.gov/vaccines/schedules/parents-adults/resources-parents.html](http://www.cdc.gov/vaccines/schedules/parents-adults/resources-parents.html).

## 2. Որտե՞ղ կարող եմ տանել իմ երեխային՝ ստանալու սահմանված պատվաստումները



- Ձեր երեխան կարող է պատվաստվել իր բժշկի մոտ կամ տեղամասային դեղատանը: Եթե չունեք բժշկական ապահովագրություն կամ հիմնական բժիշկ ձեր երեխայի համար, կարող եք այցելել անվճար կամ ցածր արժեքով պատվաստման կլինիկա: Այցելեք [publichealth.lacounty.gov/ip/clinics.htm](http://publichealth.lacounty.gov/ip/clinics.htm) կամ զանգահարեք Լոս Անջելեսի Շրջանի Տեղեկատվական Գիծ 2-1-1 հեռախոսահամարով՝ ձեզ մոտիկ կլինիկա գտնելու համար: Տեղեկատվական Գիծը հասանելի է օրական 24 ժամ և տրամադրում է տեղեկություններ մի քանի լեզուներով:

## 3. Արդյո՞ք իմ երեխան պետք է պատվաստվի COVID-19-ի դեմ



- Այո: Երեխաների պատվաստումը պաշտպանում է նրանց COVID-19-ով վարակվելուց, հիվանդանալուց, կամ վիրուսը ուրիշներին փոխանցելուց: Այս պահի դրությամբ, 12 տարեկան և բարձր տարիքի երեխաները կարող են պատվաստվել COVID-19-ի դեմ Pfizer պատվաստանյութով:
- Ճտողների համար տեղեկությունների և երեխաների պատվաստման մանրամասների համար այցելեք՝ [VaccinateLACounty.com](http://VaccinateLACounty.com):

## 4. Կարո՞ղ է իմ երեխան միաժամանակ պատվաստվել COVID-19-ի և մյուս հիվանդությունների դեմ



- Այո: COVID-19-ի դեմ պատվաստումը կարելի է կատարել մյուս պատվաստումների հետ միասին կամ տարբեր ժամանակահատվածներում: Ձեր երեխան չպետք է սպասի COVID-19-ի դեմ պատվաստման և մյուս պատվաստումների միջակայքում:

## 5. Արդյո՞ք ինձ անհրաժեշտ են լինելու իմ երեխայի պատվաստման փաստաթղթերը՝ նրան դպրոցում գրանցելու համար



- Այո: Այս տարի 1-ին և 8-րդ դասարաններ ընդունվող բոլոր աշակերտները, ինչպես նաև մանկապարտեզ և 7-րդ դասարան ընդունվող աշակերտները, պետք է ցույց տան, որ ստացել են բոլոր անհրաժեշտ սահմանված պատվաստումները: Մանրամասների համար այցելեք՝ [www.shotsforschool.org](http://www.shotsforschool.org):